

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ Թատրոնի միջազգային օրվա առթիվ

27.03.2022

Միրելի հայրենակիցներ

Այսօր աշխարհով մեկ նշվում է Թատրոնի միջազգային օրը, ինչը լավագույն առիթ է՝ հավուր պատշաճի գնահատելու արվեստի կարեւորագույն ճյուղերից մեկի դերն ու նշանակությունը հանրային կյանքում, թատերական գործիչների ստեղծագործական հաջողություններն ու ձեռքբերումները:

Թատերական արվեստը սկիզբ է առել անհիշելի ժամանակներից և մարդկությանը ուղեկցել մինչ և մեր օրերը՝ համամարդկային ու գեղագիտական արժեքներով դաստիարակելով սերունդներին:

Այդ գործին ծառայել են ինչպես արքունի, այնպես էլ ժողովրդական շրջիկ թատրոնները:

Գեղարքունիքի մարզում թատերական ավանդները սկզբնավորվել են Գավառ քաղաքում, 19-րդ դարի վերջերին և անխափան ընթացքով շարունակվում են նաև մեր օրերում:

Գավառի Լ.Քալանթարի անվան պետական թատրոնի բեմում հանդես են եկել հայկական թատերական արվեստի բազմաթիվ հանրաճանաչ դեմքեր՝ հանձինս Վահրամ Փափագյանի, Հրայր Ներսիսյանի, Վարդուհի Վարդերեսյանի, Կարպ Խաչվանքյանի, Ռաֆայել Քոթանջյանի և այլոց:

Իսկ Գավառի պետթատրոնն իր գոյության ընթացքում հանդիսատեսին ներկայացել է բազմաթիվ հետաքրքիր ու բովանդակալից ներկայացումներով՝ բեմականացնելով հայ և համաշխարհային դրամատուրգների արժեքավոր ստեղծագործությունները:

Թատրոնը եղել և մնում է այն կարևոր միջավայրը, որտեղ կենդանի խոսքի միջոցով դերասանը ներկայացնում է մարդկային հույզերի և ձգտումների աշխարհը, հանդիսատեսին հաղորդակցում մարդասիրական ու ազգասիրական վեհ գաղափարներին, պատմությանն ու մշակույթին, անցյալին ու ներկային:

Անգնահատելի է թատրոնի դերը մարդու հոգևոր կյանքում:

Թատրոնի միջազգային օրվա առթիվ

ջերմորեն շնորհավորում եմ թատերական գործիչներին, մաղթում քաջ առողջություն, խաղաղ հայրենիք, ստեղծագործական անսպառ եռանդ, նորանոր ձեռքբերումներ ու հաջողված բեմականացումներ:

Շնորհավորանքներս եմ հղում նաև թատերասեր հանրությանը:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան